Իմ սուրբ ԱՐՑԱԽ

ՀԱՅԱՍՏԱՆ երկրի կյանքն էլի դժվարացավ... Մեր տուն ու տեղը քանդվեց, ավերվեց: Գաղթականն ու չունևորը էլի հայտնվեցին: Լավն ու վատը խառնվեցին: Ներսից են քըրքըրում, դրսինը քիչ էր... Բայցևայնպես ապրում ենք, կանք, շնչում ենք, պայքարում, հույս ունենք: Ու պահեր ենք ունենում ուրախության, կնունքի, հարսանիքի, ծնունդի: Բայցևայնպես ղողանջում են մեր եկեղեցու զանգերը, ու մենք մեր հայրենական օրենքով, մեր հին կարգով ժամ ենք դնում, խաչակնքում ենք, աղոթում: Գիտենք՝ զարթնել ենք ու կանգնել նոր ճամփի գլխին... Պիտի մեր քայլն անենք, մեր նոր քայլը, որ ծանր է ու դժվար... Բայցևայնպես զարթնել ենք, ու զարթնեցնողը համայն հայության դու ես եղել, իմ Արցախ, իմ քույր ու եղբայր, դու, որից ես ոչ մի օր չեմ բաժանվում: Կարոտն ինձ խեղդում է ու ամեն մեկից, մեծ թե փոքր, տանում եմ սրտիս մեջ, իմ սիրելի, իմ չգուրգուրված, իմ խենթ ու հպարտ, առասպելական իմ իմաստուն ու համեստ, իմ ազնվական, իշխանական... Կուրծքդ բաց, կուռդ քաջ, ճակատդ բարձր, իմ խիզախ...

Քեզ ու քեզ ոտքի ելար, ազգդ ոտքի կանգնեցրիր... Մեկտեղ քայլ անենք, գնանք առաջ... Մեր ձեռքը չի հասնում քեզ, դեռ շատ չի երկար, մեր տեղն էլ է նեղ ու էլի մենակ ես համարյա: Եվ դու չպետք է երբեք, չպիտի ընկրկես, մեր տունինը անդրանիկ է... Մեր քարավանի նավն ու առաջնորդը դու ես այսօր: Ու կտրելու ես անապատը, մեր բախտի աստղ, մեր կապույտ հորիզոն Արցախ: Դուրս արի քարի արանքից, նորից ուժ առ, նորից լցվիր իմաստությամբ, հրաշք գործիր, Մովսեսի նման գերությունից ազատիր ցեղը հայոց... Առանց քեզ Հայաստան չկա, առանց քեզ հենարան չկա, առանց քեզ հերոսներ չկան... Ես ինչքա՜ն սիրեմ քեզ, սուրբ Արցախի իմ սուրբ քույրիկ, իմ եղբայր: Ի՞նչ անեմ, որ արժանի լինեմ քեզ... Դու ու քո աստվածը, չպարտվես, մենք ու մեր աստվածը՝ քայլենք:

Սոս ՍԱՐԳՍՅԱՆ

Մոսկվա, 17 սեպտեմբերի